ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Գիտություններ երկրի մասին XVIII, № 1, 1965 Науки о Земле

ՀԱՂՈՐԴԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԻՆՖՈՐՄԱՑԻԱՆԵՐ

Դ. Պ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՖՈՐՄԱՑԻԱՆԵՐԻ ԲԱՑԱՐՁԱԿ ՀԱՍԱԿԻ ՈՐՈՇՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ XIII ՍԵՍԻԱՅԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ս/թ նոյեմբերի 1-ից 5-ը Երևանում տեղի ունեցավ Սովետական Միության և մեր Ակադեմիայի կողմից համատեղ հրավիրված համամիութենական 13-րդ սեսիան, որը նվիրված էր ժամանակակից ռադիոերկրաբանության հիմնական պրոբլեմներին։

Ինչպես հայտնի է, երկրաբանության, գեոքիմիայի և միջուկային ֆիզիկայի սահմանագծում ծնունդ առած այս նոր գիտական ուղղության գլխավոր խնդիրն է՝ հիմնվելով լեռնային ապարների մեջ պարունակվող տարբեր ռադիոակտիվ տարրերի քայքայման օրինաչափությունների վրա, որոշել երկրաբանական ֆորմացիաների առաջացման ժամանակը-բացարձակ հասակը, նրանց գոյացման և կազմավորման հաջորդականությունը և այդ պրոցեսների հետ կապված օգտակար հանածոների տեղն ու դիրքը։ Ինքնստինքյան հասկանալի է, որ այդ հետազոտությունները տարվում են երկրաբանական ուսումնասիրությունների հետ սերտորեն կապված։

Ժամանակակից ռադիոերկրաբանության և գեոքիմիայի մեթոդների զարգացման մակարդակը հնարավորություններ է ստեղծում գիտական ստույգ հիմքի վրա դնել տեսական և կիրառական երկրաբանության այն հարցերի խորը ուսումնասիրությունները, սկսած մեր մոլորակի բացարձակ հասակի պրոբլեմից մինչև օգտակար հանածոների որոնման պրոգնոզներին վերաբերվող խնդիրները։

Սեսիայի աշխատանքներին մասնակցեցին Սովետական Միության և Միութենական հանրապետությունների գիտությունների ակադեմիաների, Ատոմային էներգիայի պետական կոմիտեի, Մոսկվայի պետական համալսարանի, Սովետական Միության Երկրաբանական պետական կոմիտեի և ուրիշ. թվով 28 գիտահետազոտական հիմնարկների, երկրաբանության, գեոքիմայի, ռադիոերկրաբանության, միջուկային ֆիզիկայի, ռադիոքիմիայի շուրջ 150 առաջատար մասնագետներ, դրանց թվում մի շարք անվանի գիտնականներ։

Ի դեպ պետք է նշել, որ ի տարբերություն ռադիոերկրաբանության անցյալ սեսիաների, այս տարվա սեսիայում մեծ մասնակցություն ունեցան երկրաբանական արտադրական 12 կազմակերպությունների շատ ներկայացուցիչներ։

Սեսիայի աշխատանքներին ակտիվ մասնակցություն ունեցան Հունգարիայի, Ռումինիայի, Լեհաստանի, Գերմանական դեմոկրատական ռեսպուբլիկայի Գիտությունների ակադեմիաների ակադեմիկոսներ, թղթակից-անդամներ, պրոֆեսորներ և այլ գիտական աշխատողներ, թվով 12 հոգի, որոնք հրավիրված էին Համամիութենական ակադեմիայի կողմից։

Մեծ հետաքրքրություն ցուցաբերեցին սեսիայի աշխատանքներին Հայկական ՍՍՌ Երկրաբանական վարչության, Պետական համալսարանի, Լենինմետալուրգիական ինստիտուտի, ԳԱ Սեյսմիկայի ու գեոֆիզիկայի ինստիտուտի առաջավոր մասնագետները, Երկրաբանական գիտությունների ինստիտուտի դրեթե բոլոր գիտական աշխատողները։

Սեսիայում լսվեց 24 կազմակերպություններից ներկայացված 62 զեկուցումներ, որոնց մեջ ընդգրկվեցին ժամանակակից ռադիոերկրաբանության բարձր մակարդակի վրա տարվող 1963—64 թթ. հետազոտությունների արդյունքները.

Այդ զեկուցումները նվիրված էին՝

ա) Սովետական միության տարբեր ռեգիոնների՝ Մեծ ու Փոքր Կովկասների, Միջին Ասիայի, Հեռավոր արևելքի, Ուկրաինայի, Ուրալի և այլն երկրաբանական ֆորմացիաների գեոքրոնոլոգիայի տարբեր պրոբլեմներին։

բ) Ռադիոերկրաբանական մեթոդներով կազմված ՍՍՌՄ առաջին գեոքրոնոլոգիական քարտեզի քննարկմանը։ Այդ քարտեզը ընդգրկում է Ուկրաինայի տափաստանային մասը։

գ) ՍՍՌՄ-ի որոշ ռեգիոնների մետաղային հանքավայրերի գեոքրոնոլոգիայի տարբեր հարցերին։

դ) Ռադիոերկրաբանության մեթոդական ակտուալ նշանակություն ունեցող հետազոտությունների արդյունքներին։

ե) Մեր մոլորակի հասակի որոշման ուղղությամբ կատարված հետազոտությունների արդյունքներին։

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Երկրաբանական գիտությունների ինստիտուտում տարվող ռադիոերկրաբանական ուսումնասիրությունների 1963—1964 թ. արդյունքների մասին սեսիայում լսվեց և քննարկվեց 6 զեկուցում, նվիրված Հայաստանի գեոքրոնոլոգիայի հիմնական հարցերին և մեթոդական կարևոր նշանակություն ունեցող հետազոտություններին։

Զեկուցումները նվիրված էին Հայաստանի հյուսիսային հանքաբեր շրջանների և Զանգեզուրի ինտրուզիվ զանգվածների գեոքրոնոլոգիական ուսումնասիրությունների նորագույն արդյունքներին, Հայաստանի տարբեր մասերի հրաբխային գոյացումների բացարձակ հասակի որոշման տվյալներին և Հայաստանի գլխավոր մետաղային հանքավայրերի բացարձակ հասակի ուսումնասիրությունների արդյունքներին։

Մյուս երկու զեկուցումները ամփոփում էին վերջերս կատարված ռուբիդի-ստրոնցիումի և կալիում-արգոնային մեթոդներով հետազոտված զանգվածների համեմատական արդյունքները և այլ կարևոր մեթոդական նշանակություն ունեցող հարցեր։

Սեսիան ծրագրեց երկրաբանական ֆորմացիաների առաջիկա տարիների պրոբլեմների մշակման ուղղությունները ու մեթոդական խնդիրները և ընդունեց 10 կետից բաղկացած հետևյալ որոշումները։

1). 13-րդ սեսիան գոհունակությամբ նշում է, որ ՍՍՌՄ-ում գեոքրոնոլոգիական հետազոտությունները պատշաճ տեղ են գրավել երկրաբանական ուսումնասիրությունների մեջ։ Դա ցայտուն կերպով ցուցադրվեց մի շարք զեկուցումներում, որոնք նվիրված էին գեոքրոնոլոգիական մեթոդների հասակների որոշման հարցերին։ Հատկապես հետաքրքիր տվյալներ են ստացված Հայաստանի երկրաբանների և ռադիոլոգների կողմից։ Ուկրաինայի Երկրա-

բանական ինստիտուտի, ՍՍՌՄ-ի ԴԱ Գեոքիմիայի և Ռադիումի ինստիտուտների շատ հետաքրքիր զեկուցումը նվիրված էր Ուկրաինայի բյուրեղային սուբստրատի գեոքրոնոլոգիական քարտեզին։

Ինչպես այդ ցույց էր տրված Կովկասի, Միջին Ասիայի և Անդրբայկալյան ռեգիոնների օրինակներում, առանձին ռեգիոնների գեոքրոնոլոգիական ուսումնասիրությունները այժմ ընթանում են լայն ճակատով և մեծ մանրամասնությամբ։

2). Միաժամանակ սեսիան նշում է, որ գեոքրոնոլոգիական չափումների միջին ճշտությունը որոշ լաբորատորիաներում դեռ պատշաճ բարձրության վրա չէ։

3). Սեսիան նշում է, որ անալիտիկական մեթոդների կատարելագործման հետ միասին շատ լուրջ ուշադրություն պետք է դարձնել քիմիական և միներալոգիական հետազոտությունների ճնթակա նյութերի հավաքման վրա։

4). Գեոքրոնոլոգիական լաբորատորիաների հիմնական խնդիրն է՝ առաջիկա 2—3 տարում հասնել կալիում-արգոնային մեթոդներով տարվող որոշումների ճշտության զգալի բարձրացման։ Կարևորագույն ուշադրություն պետք է դարձնել որոշումների մեթոդիկայի և նրանց ճշտության ստուգման վրա։

5). Սեսիան անհրաժեշտ է համարում, այդ նպատակով պատրաստել մեծ մասշտաբի երկու էտալոնային նմուշներ և ուղարկել բոլոր գեոքրոնոլոգիական լաբորատորիաներին իրենց աշխատանքները սիստեմատիկաբար ստուգման ենթարկելու համար։

6). Սեսիան նպատակահարմար է գտնում առաջիկա սեսիաները նվիրել մեթոդական հարցերի քննարկմանը։

Սեսիան անհրաժեշտ է համարում՝

ա) 1964—1965 թթ. ձեռնարկել «Ռուսական պլատֆորմայի և նրան շրջապատող լեռնային կառուցվածքների գեոքրոնոլոգիան» ընդհանրացնող աշխատությունը, ներգրավելով ՍՍՌՄ-ի Գիտությունների ակադեմիայի և նրա ֆիլիալների, Միութենական հանրապետությունների Գիտությունների ակադեմիաների, ՍՍՌՄ-ի պետական երկրաբանական կոմիտեյի, Բարձրագույն և մասնագիտական միջնակարգ կրթության մինիստրության երկրաբաններին ու ռադիոլոգներին.

բ) Ի նկատի ունենալով ռադիոգեն տարրերի պահպանման վրա ազդող մետամորֆիզմի պրոցեսների ուսումնասիրության կարևոր նշանակությունը, խնդրել գեոքրոնոլոգիական լաբորատորիաներին կիրառել տարբեր ռադիոլոգիական մեթոդներ զանազան գեոստրուկտուրային զոնաների երկրաբանական օբյեկտների գոյացման և մետամորֆիզմի հասակները որոշելու համար։

գ) Ստեղծել էտալոնային նմուշներ ուրան-կապարային և ռուբիդիում-ստրոնցիումային մեթոդներով 1965—1966 թվերին ստուգողական հետազոտություններ կատարելու համար։

7). Սեսիան ողջունում է ժողովրդական դեմոկրատական երկրներում ծավալվող գեոքրոնոլոգիական հետազոտությունները և սովետական գեոքրոնոլոգիայի ակտիվ աջակցությունը այդ գործում։

8). Սեսիան անհրաժեշտ է գտնում ավելի մանրամասն ուսումնասիրել բացարձակ հասակի որոշման պրոֆ. Ե. Ա. Կուզնեցովի մշակած օպտիկական մեթոդի հնարավորությունները և ֆիզիկական հիմունքները։

9). Սեսիան մեծ գոհունակությամբ արձանագրում է Հայկական ՍՍՌ ԳԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտում կատարվող ռադիոերկրաբանական, գեոքրոնոլոգիական հետազոտությունների բարձր գիտական մակարդակը և լայն ծավալը, որոնք իրենց արտացոլումը գտան Հայաստանի գեոքրոնոլոգիայի և մետաղային հանքավայրերի բացարձակ հասակի հետազոտությունների մի շարք հետաքրքիր զեկուցումներում։

10). Սեսիան արտահայտում է իր անկեղծ գոհունակությունը ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիային, սեսիայի աշխատանքների լավագույն կազմակերպման և բարյացկամության ու հյուրընկալության այն միջավայրի համար, որով շրջապատված էին սեսիայի բոլոր մասնակիցները։

Հայկական ՍՍՌ ԳԱ Երկրաբանության ինստիտուտ

Ընդունված է 10. XI. 1964